Շուկայի վերահսկողության տեսչական մարմին | Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին | Մասնագետ| 69-27.6-Մ7-1

Ենթակա և հաշվետու է
Մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին

Ենթակա և հաշվետու պաշտոններ

Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետը

Աշխատավայր
Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտասի 49/2

Աշխատանքի բնույթը (գործառույթներ)
1. Օժանդակում է Տեսչական մարմնի գործունեության ոլորտներին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերի ամփոփմանը և վերլուծությանը.

2. Օժանդակում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպումների կազմակերպմանը, այդ թվում՝ Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ.

3. Օժանդակում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ, աշխատանքային հանդիպումների կազմակերպմանը,
4. Օժանդակում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկմանը:

Իրավունքները
· Տեսչական մարմնի գործունեության պատշաճ լուսաբանման կազմակերպման նպատակով Տեսչական մարմնի ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները.

· Տեսչական մարմնի գործունեության ոլորտներին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերի ամփոփման և վերլուծության նպատակով ԶԼՄ-ների էլեկտրոնային կայքերից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ:

Պարտականությունները
· Կազմել Տեսչական մարմնի գործունեության ոլորտներին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերի վիճակագրություն,

· Կատարել ԶԼՄ-ների հետ համագործակցության կազմակերպչական աշխատանքներ,

· Տեղադրել հրապարակման ենթակա նյութեր Տեսչական մարմնի պաշտոնական կայքում, օրենքով սահմանված կարգով,

· Ամփոփել և վերլուծել Տեսչական մարմնի գործունեության ոլորտներին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը,

· Հավաքագրել Տեսչական մարմնի գործունեության պատշաճ լուսաբանման կազմակերպման նպատակով Տեսչական մարմնի ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները:

Կրթություն, որակավորման աստիճանը
ԱՌՆՎԱԶՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գիտելիքները
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը
Աշխատանքային ստաժ չի պահանջվում

Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման համար

Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում

Գործունեության ազդեցությունը
Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում

Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, շփվում է տվյալ ստորաբաժանման ընթացիկ գործունեության շրջանակներում: Տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պատվիրակված լիազորությունների շրջանակներում

Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում օժանդակում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների բացահայտմանը և մասնակցում է որոշակի կազմակերպական խնդիրների լուծմանը

Բնագավառներ

ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ

- Փաստաթղթերի նախապատրաստում

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն
- Հաշվետվությունների մշակում